

Պահանջագրերի համաձայն ցեխերին բաց են թողնվում պահեստամասեր, որոնք օգտագործվում են վերանորոգման և շարքից դուրս եկած մասերի փոխարինման համար: Սակայն ինչքանակությամբ պահեստամասեր են ծախսվել մեկ ամսում տվյալ մեքենայի վրա կամ տվ. է ծախսել, դա ոչ տքի հայտնի է: Պահեստամասերի հաշվառման աղբյուրի սխառեմի դեպքում հնարավոր են մեծ գերաժախսումներ: Դրանից խուսափելու համար անհրաժեշտ է անցնել կատարագրված պահեստամասերի ծախսման խիստ հաշվառմանը: Այդ նպատակով հաշվառման քարտերում պետք է ցույց տրվեն մեքենայի տիպը և համարը, մեքենավարի անունն ու ազգանունը, դատան, տահմանված նորման և փաստացի ծախսումը, տնտեսման կամ գերաժախսի դրամարը և այլն: Աղբյուրի հաշվառումը, անկատարած, կատարողի պահեստամասերի խնայողաբար օգտագործումը: Անհրաժեշտ է նույնպիսի հաշվառում տահմանել նաև գործիքների ծախսման համար:

Սակայն այդ միջոցառումները կարող են էֆեկտիվ լինել միայն նորմատիվային տնտեսությունը կարգավորելու դեպքում: Դրա համար անհրաժեշտ է, որպեսզի տվյալ քարհանքում ձեռնարկությունները նախօրոք պլանավորեն արտադրանքի մեկ միավորի արտադրությանն ընկնող նյութական ծախսումները: Անհրաժեշտ է նույնպես յոգաբանչուր ցեխի (քարհանքի) համար, նրանց արտադրական պայմաններին համապատասխան, նախատեսել պլանային ինքնարժեքը:

Տուֆի ինքնարժեքի իջեցման համար մեծ նշանակություն ունի ներգործարանային տրանսպորտի ռացիոնալ օգտագործումը: Շատ ձեռնարկություններում ավտոմեքենաների զգալի մասը երկար ժամանակ պարապուրդներ է տալիս, թույլ են տրվում բենզինի և այլ նյութերի գերաժախսեր: Մեծ մասամբ դա բացատրվում է նրանով, որ հանքվարչությունների ճանապարհները, չնչին բացառությամբ, գյուղական են և, հետևաբար, դժվարանցանելի, որը հաճախակի մեքենաների կոտրվածքներ է առաջացնում: Այդ ճանապարհների բարելավումը իր հերթին կհանդիսանա տուֆի ինքնարժեքի իջեցման լուրջ գործոն:

Խնայողության ուժեղացումը ամրապնդման համար ոչ պակաս նշանակություն ունի քարհանքերի պլանային օգտագործումը, որը կապահովի տնտեսության ռացիոնալ օգտագործումը և կկրճատի նրանց շահագործման ծախսերը: Չնայած դրան, մի շարք ձեռնարկություններ մինչև այժմ էլ աշխատում են առանց նախօրոք մշակված պլանի ու նախագծի: Այդ դրությունը գոյություն ունի, օրինակ, Արթիկտուֆի որոշ քարհանքերում և Կիրովականի հանքվարչությունում:

Տուֆի ինքնարժեքի իջեցումն ունի ժողովրդագատնեսական խոշոր նշանակություն: Խնդիրը կայանում է նրանում, որպեսզի լրիվ օգտագործվեն տուֆի ինքնարժեքի իջեցման գոյություն ունեցող ուղիները և բոլոր ձեռնարկությունները հասնեն բարձր շահութաբերության:

ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՈՒՄԸ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՄԵԶ ԵՎ ԳՈՐԾԱՐԱՆԱՅԻՆ ՊԼԱՆԸ

Ս. ՀՈՎՀԱՆԻՍՅԱՆ

Հայկ. ՍՍՌ Ժողտնտխոհի պլանա-տնտեսական բաժնի պետ

Ժողտնտխոհների մեկ տարվա աշխատանքը գործնականորեն ապացույցեց արդյունաբերություն և շինարարության կառավարման նոր ձևերի հսկայական ու անվիճելի առավելությունները և դրա հետ միասին բացահայտեց պլանավորման

ման թերությունները: Աշխատանքի արդյունքները ցույց տվեցին առավել խոցելի օղակները պլանային աշխատանքի կազմակերպման գործում:

Այս հոգվածում, որքան թույլ է տալիս ձեռ-

նարկությունների անցած մեկ տարվա աշխատանքի փորձը, կաշխատենք ցույց տալ պլանավորման վերակառուցման ուղիները: Մեր կարծիքով այդ վերակառուցումը պետք է իրականացվի հետևյալ ուղղություններով.

պլանավորման հնազանդոր ապակենտրոնացում և կենտրոնացման առավել նպաստակա հարմար դրսևակցում տեղական նախաձեռնության հետ.

տնտեսական ջրջանների միջև անմիջական տնտեսական փոխադարձ կապերի առավելագույն հնարավոր ընդլայնում.

միջջրջանային տնտեսական կապերի բարելավում և կոոպերացման շառավիղի աստիճանաբար կրճատում.

ձեռնարկությունների ռեզերվների լավագույն բացահայտում և նրանց լրիվ փորձադրում.

կիրառվող մասնագիտացման տնտեսական հիմնավորում.

տեղայնության որևէ արտահայտություն խափանում և անհանդուրժողություն.

պլանավորման գործում ընդօրինակման, մասնոր խնամակալության և մեկ կազմակերպությունը մյուսով փոխարինելու վերացում.

պետական կարգապահության հետագա ամրապնդում:

Արդյունաբերության մասնագիտացման և կոոպերացման բնագավառում որոշակի աշխատանք է կատարված, սակայն դա դեռևս միայն այն մեծ աշխատանքի սկիզբն է, որ պետք է կատարվի մոտ ապագայում:

Ծրեմն մեր ձեռնարկությունների որոշ դեկավարներ արտադրության մեջ վերակառուցման ամեն մի պրոցեսը դիտում են որպես մասնագիտացում, մոռանալով այն մասին, որ արդյունաբերության մասնագիտացումը ճյուղերի առանձնացման, բաժանման և մասնատման պրոցեսն է, որ ուղղված է տրոշակի արտադրանքի թողարկմանը: Այդ պրոցեսը բնորոշվում է հատուկ սարքավորման տեխնոլոգիայի առանձնացմամբ, որ հատուկ է տվյալ մասնագիտացման ուղղությանը:

Զարգացած տնտեսության մեջ արդեն ներկայումս ձեռք բերված ինչպես ներջրջանային, այնպես էլ հատկապես միջջրջանային շատ սերտ տնտեսական կապերում չի կարելի մասնագիտացում կատարել առանց այդ կապերի նախնական խոր ուսումնասիրության: Չպետք է մոռա-

նալ, որ հենց «մասնագիտացմամբ» կարող է ներքեմն զորակվել տեղայնությունը:

Մասնագիտացման զարգացումը կապված է ձեռնարկությունների միջև արտադրական սերտ կապեր հաստատելու անհրաժեշտության հետ: Ուստի մասնագիտացումն ու կոոպերացումը կարելի է պատկերացնել միայն որպես միասնական պրոցես և մասնագիտացումն իրագործելու ժամանակ կոոպերացման բոլոր պայմանների ու հեռանկարների անբավարար հաշվառումը կարող է հանգեցնել անցանկալի արդյունքների:

Այսպես սխալ կլինի գործն այնպես պատկերացնել, թե կոոպերացված կապերի փոփոխման ու բարելավման ամեն մի աշխատանք անպայմանորեն կապված է մասնագիտացման փոփոխման հետ: Այս ուղղությամբ գլխավոր գործունեություն մեկը պետք է լինի կոոպերացված կապերի բարելավումը և փոխադրումների շառավիղի կրճատումը:

Այդ պատճառով այն բոլոր հետազոտական աշխատանքների հիմքում, որոնք նախորդում են մասնագիտացման ու կոոպերացման այս կամ այն ձևերին, պետք է դրվի օպտիմումի սկզբունքը, այսինքն՝ տեխնիկական և տնտեսական նպատակահարմարության աստիճանը, համապետական շահերի տեսակետից:

Վերակառուցման էությունը հետևյալն է.

1. Իբրև արդյունաբերության գործունեության հիմք վերցվում է համապատասխան կարգով հենց ձեռնարկությունների կողմից խնամքով մշակված հեռանկարային պլանը, իսկ պլանային ժամանակաշրջանները պատկերացվում են անընդհատ, ինչպես անընդհատ է ինքը՝ վերաարտադրությունը: Հետևաբար ընթացիկ տարեկան պլանները հանդիսանում են պլանահատվածներ, այսինքն՝ օրացուցային տարվա վերջում չընդհատվող հեռանկարային պլանի մի մասը:

Հեռանկարային պլաններում պետք է նախատեսվեն ժողովրդական տնտեսության զարգացման բարձր տեմպեր և ճիշտ համաձայնություններ, որոնք բխում են գլխավոր խնդրից, այն է՝ ապահովել ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերի հետագա հզոր վերելքը: Նախօրոք, մինչև օրացուցային տարվա սկիզբը, այս կամ այն ուղղությամբ մտցվում է տարեկան պլանի մեջ,

որ գործընթացում տնի հեռակարային պլանի բաղկացուցիչ մասի ձևով:

2. Ընդգայտվում են տնտեսական շրջանների միջև եղած անմիջական ուղղակի կապերը՝ կոոպերացման պահպանվող և ստեղծվող կապերի բազայի հիման վրա:

3. Կապիտալ շինարարության բնագավառում պլանավորման նոր կարգը կանխում է միջոցների փոխադրման հնարավորությունը:

Սակավ կարևոր հարցեր չեն ծագում նաև նյութա-տեխնիկական մատակարարման ասպարեզում: Արդյունաբերության աշխատանքի վրա ազդող բոլոր թերություններից ամենամեծը նյութա-տեխնիկական մատակարարման գործի անբավարար կազմակերպումն է:

Վերջին միջոցառումները, որոնք ձեռնարկվել են Հայաստանի ԿՊ Կենտկոմը և Հայկական ՄՍՄ Միությանների Սովետը, մատակարարման կառավարումը վերակազմակերպելու և ռեսպոնսիվացի բոլոր մասնաճյուղերում ու մատակարարման կազմակերպությունները և ամբողջ մատակարարման գործը ժողովրդական հանձնելու ուղղությամբ, կվերացնեն այդ գործում եղած դիմադրվելիքներն ու անպատասխանատվությունը:

Այդ միջոցառումների հիմնական նպատակն է՝ ապահովել մատակարարման ու վաճառահանման տեղական օրգանների և միջշրջանային մատակարարողների ուղղվելիքով միասնական օրգանների տնտեսական ճիշտ փոխադարձ կապերը, ինչպես նաև հասնել արտադրության պլանների և դրանց նյութա-տեխնիկական ապահովման միջև անհրաժեշտ լծորդման: Դա կարող է ձեռք բերվել միայն ռեսպոնսիվ կառավարման աշխատանքի բարելավման և նյութական բաշխման անհրաժեշտ տեխնիկա-տնտեսական հիմնավորման դեպքում:

Արդյունաբերության պլանային աշխատանքի պրակտիկական վերջին տարում հնարավորություններ է բացել ընդլայնելու արտադրանքի այս կամ այն տեսակի արտադրության գծով պետական լրացուցիչ առաջադրանքների կիրառման բնագավառը: Այդ պրակտիկական բխում է արդյունաբերության դեկալարացիան արտադրությանը մոտեցնելու գործունից, պայմաններ է ստեղծում նրա ռեզերվները կոմպլեքսային ձևով բացահայտելու և դրանք անմիջապես շարժման մեջ դնելու համար:

Այն հայտնի դրույթը, թե իսկական պլանավորումն սկսվում է պլանի կատարման ընթացքում, է՛լ ավելի մեծ նշանակություն է հռք բերում:

Արդյունաբերության պլանավորման վերակառուցման գործում գլխավոր տեղը, որպես ժողովրդատնտեսական պլանի հիմնական օղակ, զբաղում է ձեռնարկվելու: Ուստի գործարարն պլանը պետք է հիմնավորված լինի ինչպես տեխնիկական, այնպես էլ տնտեսական կողմից: Իսկ այն բանի համար, որ այդ պլանը դառնա իսկական տեխնոֆիզիկական, պետք է նախապատրաստական մեծ աշխատանք կատարել արտադրական բազայի մանրակրկիտ ուսումնասիրման և անալիզի համար:

Տեխնոֆիզիկականի հիմնական բաժիններն ու հանդիսանում արտադրական ծրագիրը, ձեռնարկվելու տեխնիկական զարգացման և կազմ-տեխնիկական միջոցառումների պլանը, աշխատանքի և աշխատավարձի պլանը, նյութա-տեխնիկական մատակարարման պլանը, արտադրանքի ինքնարժեքի իջեցման պլանը, ձեռնարկվելու ֆինանսական պլանը և կապիտալ շինարարության պլանը:

Արդյունաբերության աշխատանքային ֆոնդի ճիշտ գիտական որոշման համար արտադրական ծրագրի տեխնիկա-տնտեսական հիմնավորումը կատարվում է ձեռնարկվելուների կարողությունների օգտագործման հիման վրա: Այս կապակցությամբ ուսումնասիրվում են կարողությունների հերթափոխության, աճի ու շարժիչ դերս գալու հարցերը և միջին տարեկան կարողության որոշումը: Վերլուծվում է լծորդման հարցը արտադրության առանձին տեղամասերի և օղակների միջև:

Այն դեպքում, երբ իրավունք է տրվում ընտրել առարկաների նոմենկլատուրան, կարող է կիրառվել առավել էֆեկտավոր նոմենկլատուրայի օպտիմալ հաշվարկի մեթոդը, սարքավորման առկա պարկը օգտագործելու նպատակով: Այս մեթոդը ամենից հաճախ կիրառվում է հեռանկարային պլանը մշակելիս կամ ձեռնարկվելու պրոֆիլը բացահայտելիս: Այս մեթոդի նշանակությունն աճում է մասնագիտացման ու կոոպերացման կենսական հարցերի լուծման պայմաններում:

Սարքավորման տարեկան աշխատանքային ֆոնդը հաշվվում է ըստ նրա առանձին տեսակների հաստոցա-ժամերով կամ մեքենա-ժամերով, հաշվի առնելով բոլոր թվարկված պայմանները և հանդես է գալիս որպես արտադրական կարողությունների բալանսի ակտիվ մասը: Այդպիսի բալանսի պատիվ հատվածը հանդիսանում է սարքավորման աշխատանքային ֆոնդի պահանջ-մունքը, որը հաշվվում է նախատեսվող արտադրական ծրագրի (նոմենկլատուրայի և քանակի) համապատասխան: Տեխնոլոգիական պրոցեսին համապատասխան, պրոգրեսիվ նորմաների հիման վրա այդ պահանջմունքը նույնպես վերածվում է հաստոցա-մեքենա-ապարատա-ժամերի:

Բալանսի այս ներկու հատվածները համեմատելու դեպքում բացահայտվում են.

ա) ծրագրի հետագա մեծացման հնարավորությունները:

բ) հաղթահարում պահանջող անհամաձայնեցվածությունները:

Այստեղից բխում է տեխարդֆինպլանի երկրորդ հատվածը, որը պետք է պարունակի հետևյալ միջոցառումները. ա) նեղ տեղերի վերացում. բ) տեխնիկական պրոգրես (սարքավորման փոխարինում, մոդեռնացում, պրոգրեսիվ տեխնոլոգիա). գ) առարկաների նոր տեսակների յուլացում. դ) աշխատանքային ծախսերի կրճատման ուղղված բոլոր կազմատեխնիկական միջոցառումները:

Հիմնավորման գլխավոր մասը կայանում է հենց ներկրորդ հատվածում: Սխալ է տեխնիկայի զարգացման պլանը կազմտեխպլանից մի կողմ դնելը: Ընդհակառակը, դրանք պետք է միասնաբար հանդես գան:

Տեխարդֆինպլանի երկրորդ հատվածը աշխատանքի պլանն է, որն իր մեջ ընդգրկում է աշխատանքի արտադրողականության բարձրացման, անձնակազմի թվի, աշխատավարձի ֆոնդի և միջին աշխատավարձի պլանը:

Աշխատանքի պլանի հիմքում գտնվում է աշխատանքի արտադրողականության բարձրացման պլանը, որը պետք է կազմվի հաշվի առնելով բոլոր գործոնները և, ամենից առաջ, տվյալ ձեռնարկության տեխնիկայի զարգացումը: Թերությունն այն է, որ աշխատանքի արտադրողականությունը մեծ մասամբ պլանավորվում է ձեռ-

նարկության տեխնիկական տեղաշարժերից կրտրված, առանց անհրաժեշտ հաշվումների, որը և աշխատանքի արտադրողականության զարգացման մեջ մտցնում է սահմանափակման տարրեր:

ՍՄԿՊ XX համագումարից հետո սկսվել է աշխատանքի արտադրողականության բարձրացման այնպիսի շեշտակի վերելք, որ նրա հետագա զարգացումը կարող է ճիշտ հաշվի առնվել միայն տեխնիկա-տնտեսական մանրակրկիտ հաշվարկների միջոցով, որոնք կապված են տեխարդֆինպլանի երկրորդ հատվածի բոլոր տարրերի հետ: Դրա հետ միասին անհրաժեշտ է էմպիրիկ ձևով հաշվի առնել նաև մյուս ոչ քիչ կարևոր գործոնները, այն է՝ հմտություններ ձեռք բերելը, բանվորների և ինժեներա-տեխնիկական աշխատողների տեխնիկական ուսուցումը, նյութական բարեկեցության հետագա բարելավումը:

Աշխատանքի արտադրողականության բարձրացումը, արտադրանքի քանակական աճի ապահովման հետ միասին, վճարական ազդեցություն է գործում արտադրանքի ինքնարժեքի և ձեռնարկության շահութաբերության բարձրացման վրա:

Աշխատանքի արտադրողականության հաշվումների դեպքում պետք է հանձնարարվի աշխատանքային ժամանակի ֆոնդի անալիզի բալանսային մեթոդը, լայնորեն օգտագործելով աշխատանքային օրվա խրոնոմետրաժի և լուսանկարման տվյալները: Միայն նպատակահարմար օգտագործվող աշխատանքային ժամանակը համեմատելու և նրա կորուստները բացահայտելու միջոցով հնարավոր է հայտնաբերել աշխատանքի արտադրողականության իսկական ռեզերվները:

Աշխատավարձի պլանավորումը սերտ կախման մեջ է գտնվում աշխատանքի արտադրողականության աճի պլանավորումից: Այս երկու ցուցանիշների շաղկապումը պետք է ապահովի երկու խնդիրների կոմպլեքսային լուծումը՝ կենդանի աշխատանքի ծախսերի կրճատումը և, այդ հիման վրա, արտադրության ծախսերի իջեցումը ու բանվորների նյութական բարեկեցության հետագա բարելավումը: Այդ պատճառով, երբ խոսում են միջին աշխատավարձի նկատմամբ աշխատանքի արտադրողականության առաջ ընկնող աճին ապահովելու անհրաժեշտության մասին, նկատի ունեն աշխատանքի այնպիսի արտադրողականություն, որը պետք է ապահովի միջին

աշխատավարձի անշեղ աճը: Այս դեպքում միջին աշխատավարձը պետք է ետ մնա աշխատանքի արտադրողականության աճի տեմպերից: Եվ որքան խիստ է այդ ետ մնալը բարձրացող միջին աշխատավարձի դեպքում, այնքան ավելի արագ է ձեռք բերվում հասարակական աշխատանքի մեծ տնտեսում:

Ինքնարժեքի ցուցանիշը հանդիսանում է տեխարդֆինպլանի ընդհանրացնող սինթետիկ հատվածը: Արտադրանքի ինքնարժեքի մեջ արտացոլվում են ինչպես կենդանի, այնպես էլ նյութականացված աշխատանքի միավորված ծախսերը: Ինքնարժեքը որոշում է, թե թողարկվող առարկաների պատրաստումը որքան է նստում տվյալ ձեռնարկության վրա: Ինքնարժեքի պլանի մշակման հաջողությունը որոշվում է նրանով, թե տնտեսական ու մեթոդոլոգիական տեսակետից որքան ճիշտ են կազմված աշխատանքի և նյութա-տեխնիկական մատակարարման պլանի բաժինները, որոնք վերաբերում են շրջանառու ֆոնդերի պլանավորմանը և հատկապես հումքի, նյութերի, էլեկտրաէներգիայի և այլ ծախսերի տեսակարար նորմաների սահմանմանը:

Հաշվի առնելով այն թերությունները, որ տնի համադրելի արտադրանքի ինքնարժեքի ցուցանիշը, 1959 թվականից ժողովրդական տնտեսու-

թյան պլանի մեջ մտցվում է ապրանքային արտադրանքի 1 ոտաբլոն ընկնող ծախսերի ցուցանիշը, արտահայտված կուպոններով: Արդյունաբերության աշխատանքի վերջին տարիների պրակտիկան, երբ ձեռնարկությունների նոմենկլատուրան դժարի փոփոխությունների է ենթարկվում, իսկ դրա հետ միասին փոխվում է նաև համադրելիության շրջանը, համադրելի արտադրանքի ինքնարժեքի ցուցանիշը դարձնում է ոչ պիտանի:

Ինչ վերաբերում է տեխարդֆինպլանի մյուս բաժիններին, ապա ցանկալի է նշել շրջանառու միջոցների նորմատիվների հետագա կրճատման անհրաժեշտությունը և նոր կարողությունների զործարկման ժամկետների մանրակրկիտ համաձայնեցումը ձեռնարկությունների արտադրական ծրագրի հետ:

Արդյունաբերության մեջ պլանավորման վեարկառուցման կապակցությամբ ծառայած մեծ խնդիրները տնտեսագետներին ու ինժեներներին պարտավորեցնում են իրենց ուշադրությունը կենտրոնացնել ձեռնարկությունների նորմատիվ-հետադադարական աշխատանքի բարելավման հարցերի վրա և դրանով իսկ նպաստել տեխարդֆինպլանի՝ իբրև ժողտնտպլանի հիմնական օղակի կատարելագործմանը:

ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ ԾԱԽՍԻ ՊԱԿԱՍԵՑՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ ԿԱԼՑԻՈՒՄԻ ԿԱՐԲԻԴԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Օ. Բ. ԱՆՎԵՐԴՅԱՆ

Տեխնիկական գիտությունների թեկնածու

ՍՄԿՊ Կենտկոմի Մայիսյան պլենումի որոշումը քիմիական արդյունաբերության արագ զարգացման, հատկապես սինթետիկ նյութերի արտադրության մասին, թերադրվում է Երկրի էկոնոմիկայի հետագա վերելքի և տեխնիկական պրոգրեսի համար մղվող պայքարի շահերով:

Օրդանական սինթեզի մի շարք պրոդուկտների ստացման համար հիմնական բազան հանդիսանում է կալցիումի կարբիդը:

Ներկայումս կալցիումի կարբիդի համաշխար-

հային արտադրությունն ունի հետագա զարգացման տենդենց և բաշխվում է հետևյալ կերպ.

Պարարտանյութերի արտադրության և երկաթային ու ծծմբային հանքաքարերի մետալուրգիայի մեջ	12,5 %:
Մետաղների սովորական եռակցման ու կտրուրիայի մեջ	21,5 %:
Քիմիական սինթեզի արդյունաբերության մեջ	66 %:

ՍՍՌՄ-ում կալցիումի կարբիդը ստացվում է միայն էլեկտրաէներգիայի մեթոդով: Այդ դեպքում